պարսպաց վրայ։ Շատ անգամ ինձ պատահել է կանգ առնուլ այդպիսի խաչքարանց դիմաց, մանաւանդ Սուտաղի գենուացի բերդին մեծ կրկնայարկ դրան ձախակողմեան որմին առաջ, ուր մեծ բարձրութեան վերայ, առանձնացեալ հայակոփ և հայաքանդակ քար մի, վկայէ վեցհարիւր տարիներով յառաջ՝ այդ տեղուանք Հայոց գոյութեան, որ Գենուացւոց հետ աջակից չինել են այդ աշտարակազարդ բերդը։

Մեր նպատակէն չհեռանալու համար՝ Կաֆայի վրայ ամփոփենք խօսքերնիս։

Ինչպէս 1475ին Թուրքաց Կաֆայի տիրապետելու միջոց, նոյնպէս և անցեալ դարու վերջերը (1773) Ռուսաց ձեռք անցնելու պատերազմաց պատճառաւ՝ քարուքանդ եղած է Կաֆա, մեծամեծ շէնքերը հիմնայատակ, դռներուն և պատուհանաց շրջանակք և բարաւորք՝ իբրև նիւթ վառելի կամ վառելափայտ գործածուած են բնակչաց, ամենեւին ակնածութիւն չանելով ոչ ճարտարապետական ձևին և ոչ շէնքին հնութեան. և մինչդեռ այժմ, հարիւր տարի անցնելէն վերջ, ի հնութենէ մնացած կիսաւեր ու գրեթէ անպէտ շէնքերու վրայ մասնաւոր հոգ և հսկողութիւն կը լինի կառավարութեան ու քաղաքապետութեան խնամքով, հարիւր տարի յառաջ, հարկ է խոստովանիլ, անխնայ կերպով կործանուած և ոտնակոխ եղած են՝ քաղաքիս կարևորագոյն և փառաւոր շէնքերը։ Հաւանութեան է որ եթէ անոնց յարգը չի ճանչցող տգէտ ամբոխն և ռամիկ՝ այդպէս անխնայ վարուած չլինէին Թէոդոսիոյ հին շինուածոց նկատմամբ, ո՞ գիտէ դեռ քանի՞ գեղեցիկ յիշատակարանք կ'ունենայինք մեր ձեռքը, նոյն իսկ հայկական գաղթականաց պատմութեան մասին։ Սակայն յետ կրկին և կրկին Կաֆայի աւեր-